ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

01-ը հունիսի 2026թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ (գնահատման աշխատակազմի պատասխանատու)՝ (ԳԱՊ)

ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏԱՎ ՎՇՇ և ՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Ն. Նիկողոսյան,

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԳԿ պլանավորման և հսկողության բաժնի ավագ մասնագետ Ա. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏԱՎ վարչական շենք-շինությունների շահագործման, սպասարկման և ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մատինյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Արսենյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ***ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Արսենյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. **«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14»** ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Արսենյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**ապրանքների**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ
2	«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ
3	«Առկտուր» ՍՊԸ
4	«Վանդեկոր» ՍՊԸ
5	«ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ
6	«Թուրվանդ» ՍՊԸ
7	«ՍԱՄ-ՍՈՒՐ» ՍՊԸ
8	«Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» **ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Արսենյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ «ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որտեղ հավելված 1.1-ում բացակայում էր «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ընթացակարգի հրավերով նախատեսված 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված «Արտաքին տեսքը և մնացած չափերը՝ համաձայն նկարի» արտահայտությունը և/կամ հրավերով նախատեսված նկարը:

Անհրաժեշտ է ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել Էլ.փոստ՝ anahit.arsenyan@mil.am հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.4 03.06.2026թ.-ին կայացած շարունակված նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Արսենյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ տես հավելված 1:

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, համապատասխանում են հրավերի պայմաններին.

Հավելված 1

	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումը	գինը		անվանումները	գինը		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Բազկաթոռներ, (բազկաթոռներ խորհրդակցության)	հատ	40	-	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	1 400 000	1 680 000	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	1 400 000	280 000	1 680 000
2	արխիվի դարակաշարեր	հատ	60	-	«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ	3 350 000	4 020 000	«ՔԱՐՀԱՏ» ՄԵՔԵՆԱ ՓԲԸ	3 350 000	670 000	4 020 000
								«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	3 900 000	780 000	4 680 000
								« ՍԱՄ-ՍՈՒՐ » ՍՊԸ	4 000 000	800 000	4 800 000
								« Թուրվանդ » ՍՊԸ	4 050 000	810 000	4 860 000
								« Ինտերսերվիս Պլյուս » ՍՊԸ	4 150 000	830 000	4 980 000
								« ՎԻԳՄԵՏ » ՍՊԸ	4 320 000	864 000	5 184 000
								«Վանդեկոր» ՍՊԸ	5 520 000	-	5 520 000
								«Առկտուր» ՍՊԸ	7 999 500	1 599 900	9 599 400

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Արսենյան)

4.1 **03.06.2026թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված և ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել հետևյալ մասնակիցներին՝ **տես Հավելված 1:**

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Արսենյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող՝ Ն. Նիկողոսյան

Գնահատող՝ Ա. Բարսեղյան

Գնահատող՝ Ն. Մատինյան

Գնումները համակարգող՝ Ա. Արսենյան